

**ՆԱՄԱԿ ՍԻՐՈՅ, ՆԱԽԱՆՁԻ ԵՒ ԱՏԵԼՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ**

Ներկայիս մեծ է թիւը անոնց, որոնք միշտ նախանձով կ'այրին, երբ իրենց եղբոր յաջողութիւնը տեսնեն յատկապէս, երբ ան նիւթապէս կամ արհեստով եւ կամ իր ուսուցումներուն համար կը յարգուի շատերուն կողմէ: Նախանձոտները երբ այս տեսնեն, կը հային ու կը մաշին, բամբասանքի խօսքեր կը յօրինեն անոր մասին եւ Աստուծոյ կամքին հակառակ կը շարժին, որ իրենց եղբոր այդ յաջողութիւնը չնորհած է: Ահաւասիկ թէ ինչու, նոյնիսկ եթէ նախանձոտը մեծապէս ճգնի եւ բազմաթիւ առաքինութիւններու տէր ըլլայ, կուսական սրբութիւն ունենայ, օրուան ընթացքին պահեցողութեամբ եւ ճգնութեամբ ինքզինքը մաշեցնէ գիշեր ու ցերեկ, քուրձով եւ մոխիրով մշտահոս արցունքներ թափէ, իր ողորմութիւններովը աղքատանայ, մեծամեծ հրաշքներ գործէ, աղօթքներով եւ փառաբանութեամբ երկինքի հրեշտակներուն նմանի, նոյնիսկ մարտիրոսանայ ու կրակի մէջ այրի եւ սակայն իր սրտին մէջ նախանձ եւ չարութիւն ունենայ, մարդասպաններէ եւ շնացողներէ աւելի պիղծ եւ մեղքերու մէջ լողացող ամբարիշտներէն աւելի ամբարիշտ պիտի ըլլայ: Ո՞ր չարիքը ուրեմն կրնայ աւելի ժանտագոյն ըլլայ, քան նախանձը, որ կրակէն աւելի այրող է, սուրէն աւելի բնաջնջող է գայն ունեցողները: Ո՞վ կրնայ հանդուրժել այդ բոցին եւ կամ ի՞նչ տեսակի ներում պիտի ունենան նման սատանայական անձերը:

**Յ. Մանդակունի**

**Լո՛ւտ կենանք, որպէսզի Աստուած գործէ**

Իսրայէլացիները ազատագրուելէ ետք Եգիպտոսի գերութենէն, եկան եւ կանգ առին Կարմիր ծովու ափին: Անոնք պէտք էր անցնէին Կարմիր ծովէն որպէսզի քամբայ ելլէին դէպի խոստացեալ Քանանու երկիրը: Տակաւին ծովափն էին երբ յանկարծ տեսան Եգիպտացիները որ իրենց կողմը կը սուրալին կատաղօրէն: Ժողովուրդը սարսափահար եղած Մովսէսին դիմեց: Մովսէս անոնց ըսաւ. «Տէրը ձեզի համար պիտի պատերազմի: Դուք լո՛ւտ կեցէք» (Մճ 14.14): Լուտ կենալ, կը նշանակէ վստահիլ ու ապաւինիլ Աստուծոյ: Սիրելիներ՛ք, թող աշխարհ վազէ մեր վրայ, իսկ մենք ստրվիմք լուսեամբ վստահիլ Աստուծոյ: Վստահի՛մք Աստուծոյ նոյնիսկ եթէ ամբողջ ծով մը ունիմք մեր դիմաց մեր քամբան փակող, ինչպէս էր պարագան Եբրայեցիներուն:

Սիրելի ընթերցող, ճՐԱԳ թերթը ամէն Կիրակի կը բաժնուի մեր ժողովուրդին, եկեղեցիներու բանկային մօտ: Նաեւ՝ Facebook-ի վրայ փնտռել «Jerak կամ ՃՐԱԳ», ապա սեղմել «Like»ը, կարդալու կամ անդամագրուելու համար:

**ՀԱՍՅԷ.**

ՃՐԱԳ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300- facebook-ի էջ jerak ճրագ թերթ



ՔՈՒ ԽՕՍԲԴ ԽՄ ՈՏԹԵՐՈՒՄ ԾՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս. 119-105)

ԺԲ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ, 20 ՅՈՒՆՈՒԱՐ 2019 ԹԻՒ 3

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ  
Ես. 54.1-14: Ա. Տն. 1.1-11:  
ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ 2.1-11

**Ա. ԶԿՆԻ ԾՆՆԴԵԱՆ**

Յիսուսի Գալիլիա հասնելուն երրորդ օրը հարսանիք մը կար Կանաքաղաքին մէջ, եւ Յիսուսի մայրը հոն էր: Յիսուս եւ իր աշակերտներն ալ հրաւիրուած էին հարսանիքին: Երբ զինին պակսեցաւ, Յիսուսի մայրը իրեն ըսաւ. «Գինի չունիմ»:

«Մա՛յր, մեզի ի՞նչ»,- պատասխանեց Յիսուս,- «Իմ ժամանակս տակաւին չէ հասած»:

Սակայն իր մայրը ըսաւ սպասաւորներուն. «Ինչ որ ըսէ ձեզի՝ կատարեցէ՛ք»: Հրեաներու ծիսական մաքրութեան սովորութեան համաձայն, հոն քարէ վեց կարասներ կային, որոնցմէ իւրաքանչիւրը ութսունէն հարիւր լիթր կ'առնէր: Յիսուս ըսաւ սպասաւորներուն. «Կարասները ջուրով լեցուցէ՛ք»:

Եւ սպասաւորները լեցուցին մինչեւ բերան: Յետոյ ըսաւ անոնց. «Հիմա առէ՛ք եւ սեղանապետին տարէ՛ք»:

Անոնք ալ տարին: Սեղանապետը համտեսեց զինի փոխուած ջուրը, բայց չգիտցաւ՝ թէ ուրկէ էր. թէս սպասաւորները, որոնք ջուրը լեցուցած էին՝ գիտէին: Այն ատեն սեղանապետը փեսային ըսաւ. «Ամէն մարդ նախ ընտիր զինին կը հրամցնէ, իսկ երբ զինովան՝ այն ատեն հասարակը, մինչ դուն ընտիր զինին պահեր ես մինչեւ հիմա»:

Յիսուս իր այս առաջին հրաշքը կատարեց Գալիլիոյ Կանաքաղաքին մէջ: Հոն ան իր փառքը յայտնեց, եւ աշակերտները հաւատացին իրեն:

**ՄԱՐԳԱՐԵԱԿԱՆ ԳԻՐՔԵՐ  
ՊՕՂՈՍ ԱՆՈՎԵՏԱԼԻ  
ՆԱՄԱԿՆԵՐԸ**

**ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ  
54.1-13**

Ուրախացիր, Երուսաղէմ, դուն՝ ամուրդ, որ չէիր ծնաներ. ցնծութեամբ երգէ՛ եւ աղաղակէ՛: Դուն որ չէիր երկներ, որովհետեւ դուն, անլուքեան պատճառով լքուածդ ատի շատ զաւակ պիտի ունենաս քան ամուսին ունեցողը,- կ'ըսէ Տէրը: Ընդարձակէ՛ վրանիդ տարածութիւնը, ընդլայնէ՛ պատերը, տեղ մի՛ խնայեր. չուանները երկարէ՛, ցիցերը ամրացուր՛, որովհետեւ ամէն ուղղութեամբ պիտի տարածուիս շուտով, քու սերունդդ ազգերու պիտի տիրէ եւ անոնց լքած քաղաքները պիտի շինէ ու լեցնէ:

Մի՛ վախճար, այլեւս ամօքով պիտի չմնաս. մի՛ անչնար, այլեւս պիտի չնախատուիս. անլուքեանդ յախտեանական ամօքը պիտի մոռնաս, այրիութեանդ նախատիւնքը բնաւ պիտի չլիջես, որովհետեւ Ստեղծիչդ քեզի ամուսին պիտի ըլլայ: Ան՝ որուն անունն է՝ ԵՐԿՆԱՅԻՆ ԶՕՐՔԵՐՈՒՄ ՏԵՐ, Իսրայէլի սուրբ Աստուածը, որ պիտի փրկէ քեզ եւ ամբողջ աշխարհին ալ Աստուածը պիտի կոչուի:

Լքուած եւ վշտահար կին մը չէի՞ր, կամ մերժուած նորահարս մը չէի՞ր, երբ Տէրը քեզ կանչեց: Արդ, Աստուած կ'ըսէ. «Թէեւ կարճ ժամանակ մը քեզ լքեցի, բայց ողորմութեամբ եւ սիրով քեզ պիտի ընդունիմ: Բարկութեան պահուն կարճ ատեն մը երես դարձուցի քեզմէ, բայց յախտեանական սիրովս պիտի գթամ քեզի», կ'ըսէ Տէրը, փրկիչդ:

«Ինչպէս ժամանակին ջրհեղեղէն ետք Նոյին երգում ըրի՛ ալեւս բնաւ երկիրը չպատժել ջրհեղեղով, նոյնպէս ալ հիմա կ'երդնում որ բարկութեամբս պիտի չպատժեմ քեզ:

Լեռները կրնան կորսուիլ եւ բլուրները չքանալ, բայց ողորմութիւնս անպակաս պիտի ըլլայ քու վրայէդ, խաղաղութեան ուխտս անասան պիտի մնայ»,- կ'ըսէ ողորմած Տէրը:

Ո՛վ Երուսաղէմ, փոթորիկէն զոհուած անմխիթար տառապեալ, հաշտութիւն պիտի ընես հետդ, որպէսզի մխիթարուիս. ահա ես քու հիմներդ շափիւղայ քարերով պիտի դնեմ, պատերդ՝ կարկեհան քարերով, աշտարակներդ կարմիր յակիթներով պիտի կանգնեմ, դռներդ՝ բիրտղէ, եւ շուրջդ պարիսպ պիտի քաշեմ ընտիր եւ թանկագին քարերով:

**ՊՕՂՈՍ ԱՆՈՎԵՏԱԼԻ ԱՆՈՎԵՏԻՆ  
ՆԱՄԱԿԸ ՏԻՍՈՒԹԵՆՈՍԻՆ  
1.1-11**

Ես՝ Պօղոս, որ Քրիստոս Յիսուսի առաքեալն եմ՝ մեր փրկիչ Աստուծոյ եւ մեր յոյսը եղող Քրիստոս Յիսուսի հրամանով, քեզի կը գրեմ, հաւատքի հարազատ որդիս, Տիմոթէոս: Թող Հայրն Աստուած եւ մեր Տէրը Քրիստոս Յիսուս՝ շնորհք, ողորմութիւն եւ խաղաղութիւն պարգեւեն քեզի:

Երբ Մակեդոնիա կ'երթայի խնդրեցի, որ Եփեսոս մնաս եւ խօսիս քանի մը հոգիներու, որպէսզի դադրին օտար վարդապետութիւններ ուսուցանել եւ չզբաղին սկիզբ ու վերջ չունեցող առասպելներով եւ ազգահամարներով, որոնք վէճերու դուռ կը բանան, փոխանակ օգնելու մարդոց հաւատքին եւ Աստուծոյ ծրագրին իրականացման: Գերագոյն պատուիրանը սերն է. անարատ սրտէ, մաքուր խղճմտանքէ եւ անկեղծ հաւատքէն բխած սերը: Շատեր այս պատուիրանները մոռցած, դատարկ վիճաբանութեանց մէջ մտնելով՝ մեզի Օրէնք սորվեցրնելու ելեր են, մինչդեռ ոչ իրենց խօսածը գիտեն, ոչ ալ Աստուծոյ Օրէնքը, որուն մասին այնքան վստահութեամբ կը ճառեն:

**ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ**

**ԱՆՏՈՆ ԵՒ ԿՐՕՆԻԴԷՍ  
ՃԳՆԱԽՈՐ**

Կապաղովկեան Կեսարիոյ մէջ կ'ապրէին այս երկու կրօնաւորները, եւ հանրածանօթ էին իրենց եզնողական առաքիլութեամբ: Լուսաւորիչ միասին տարաւ զանոնք Հայաստան եւ երբ Տարօնի Ինակեան մեհաստանը հաստատեց յանուն Յովհաննու Կարապետին, անոնց եւ իրենց ընկերակցողներուն յանձնեց նոյն սրբավայրին վանական կազմակերպութեան եւ ծառայութեան գործը: Իրենց այս նորստաց պաշտօնը կատարեցին անոնք ամենայն նախանձախնդրութեամբ, յանախ ընդունելով նաեւ Լուսաւորիչի այցելութիւնը: Իբրեւ քառասուն տարի նուիրեալ ծառայութեամբ ապրել եւ գործել վերջ, խաղաղութեամբ կնքեցին իրենց կեանքը եւ թաղուեցան հոն Դ. Դարուն առաջին կիսուն վերջերը:

**ԽՐԱՏ՝ ԲՈՂՈՐ ՔՐԻՍՏՈՆԵԱՆՆԵՐՈՒՆ.  
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՐԶՆԿԱՑԻ՝  
ՀԱՒԱՏՔԻ ՄԱՍԻՆ**

*Հաւատքը մարդուն սիրտին մէջ արմատացած տունկ է, որուն արմատը՝ Հայրն է, արմատին վրայ գտնուող ոտքը՝ Որդին է, տունկին եւ ոտքին վրայի անթառամ ծաղիկը՝ Ս. Հոգին, իսկ քաղցրահամ պտուղը՝ բոլոր բարի գործերն են, որովհետեւ պտուղը՝ արմատէն, ոտէն եւ ծաղիկէն կը յառաջանայ, ինչպէս բարի գործերը՝ հաւատքէն: Ինչպէս, որ ծառը առանց պտուղի գեղեցիկ չերեւիր եւ առանց ծառի պտուղ չըլլար, նոյնպէս հաւատքը առանց գործի վայելուչ չէ, ոչ ալ գործերը՝ առանց ճշմարիտ եւ ուղիղ հաւատքի:*

**Որքան կարելի է ձեզի, ամէն մարդոց հետ խաղաղութիւն ունեցէ՛ք: (Հռովմ. 12.18):**

Մարդ մը, որ հարցեր կ'ունենար իր դրացիին հետ, ջանաց խաղաղութեամբ լուծել զանոնք: Համոզուելով, որ կարելի պիտի ըլլար սիրով վերջ տալ ծագած դժուարութեանց, ան դիմեց օրէնքին: Բացատրելու համար իր տեսակէտը, ան ըսաւ. «Լուրջ ջանք ըրի գործադրելու առաքեալին պատուէրը՝ խաղաղութիւն ունենալու մարդոց հետ, բայց անօգուտ: Շնորհակալ եմ Աստուծոյս անոր համար՝ որ ան չէ ըսած թէ խաղաղութեամբ պէտք է ապրիլ բոլոր մարդոց հետ կեանքի բոլոր պարագաներուն տակ: Աստուած այդպէս չ'ըսեր որովհետեւ գիտէ՝ թէ կարգ մը մարդոց հետ խաղաղութեամբ ապրիլ կարելի չէ»:

Դժբախտաբար շատեր իրենց կարելին ի գործ չեն դնել՝ խաղաղութեամբ ապրելու համար: Տղայ մը հարցուց իր հօրը, թէ ինչպէ՞ս կը սկսիմ պատերազմները եւ հայրը այսպէս պատասխանեց. «Առաջին աշխարհամարտը սկսաւ երբ Գերմանիա գրաւեց Պելճիքան»: Դիշդ այդ պահուն մայրը միջամտեց եւ ըսաւ. «Հաճիս ճշմարտութիւնը յայտնէ: Պատերազմը սկսաւ մարդու մը սպանութեան պատճառով»: Ամուսինը բարկացաւ եւ պոռաց. «Ո՛վ կը պատասխանէ տղուն հարցումին. դո՞ւն թէ ես»: Կիննալ բարկացաւ եւ դուռը ուժգին զարնելով դուրս ելաւ: Տղան ըսաւ. «Հայր, հիմա գիտեմ, թէ պատերազմները ինչպէ՞ս կը սկսին»:

Արդեօք դուն բարկութեամբ կը հակադրես, թէ մշակած ես խաղաղութեամբ ապրելու սովորութիւնը: Յիսուս աղօթեց իր թշնամիներուն համար: Դուն ալ կ'աղօթե՞ս: Փորձէ՛նք խաղաղութեամբ ապրիլ բոլորին հետ: